

VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ի ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 17 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 79 հարց և արդյունքում ընդունվել է 74 որոշում, որոնցից 28-ը՝ նորմատիվ և 46-ը՝ անհատական:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է բարձրագույն կրթությամբ կադրերի գերակշռությամբ՝ 91.8% (46.9%-ը տնտեսագետ է): Աշխատակիցների 23.2%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 76.8%-ը՝ կանայք:

ՀՀ ԱՎԾ-ում 2015թ.-ին աշխատանքի է ընդունվել 35 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ 24, այդ թվում՝ արտամրցութային կարգով՝ 7,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում՝ 10,
- այլ աշխատողներ՝ 1:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմում 2015թ.-ին աշխատանքից ազատվել է 32 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայողներ՝ 21,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ՝ 10,
- այլ աշխատողներ՝ 1:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են	Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
Բարձրագույն	1	2	-
Գլխավոր	26	26	-
Առաջատար և կրտսեր	76	72	-
Ընդամենը՝	103	100	-

Քաղաքացիական ծառայության գլխավոր և առաջատար թափուր պաշտոնները համալրելու նպատակով ՀՀ ԱՎԾ աշխատակազմում կայացել է 3 մրցույթ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում՝ 1 մրցույթ :

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով շնորհվել է համապատասխան դասային աստիճան՝ ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 3 քաղաքացիական ծառայողի, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ 14 քաղաքացիական ծառայողի:

Շարունակվել է կատարելագործվել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ ԱՎԾ միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման արդյունավետությունն ապահովելու նպատակով ներդրված «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը:

Կատարվել են «Հայկական ծրագրեր» հաշվապահական-համակարգչային ծրագրով անձնակազմի անձնական տվյալների մուտքագրման աշխատանքեր:

Սահմանված կարգով իրականացվել է սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատողների անձնական տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի մշտադիտարկում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾ) հայտի համար հաշվարկվել է 2016, 2017, 2018 թվականներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար սահմանվող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարներն ըստ պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման սանդղակի համապատասխան գործակիցների:

Պատրաստվել են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի բնականոն աճը սահմանող իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ ԱՎԾ-ում աշխատող զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա կազմված պահեստագորայինների, զինվորական տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած անձանց ցուցակները և ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունները ներկայացվել են զինվորական հաշվառում վարող տարածքային զինկոմիսարիատներ:

ՀՀ ԱՎԾ նախագահի.

- 28.12.2015թ. թիվ 203-Ա հրամանով հաստատվել է 2016թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը՝ հաստիքացուցակը,
- 28.12.2015թ. թիվ 201-Ա հրամանով հաստատվել է 2016թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատատեղերի ցուցակը,
- 28.12.2015թ. թիվ 13-Գ հրամանով հաստատվել է 2016թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության հաստիքային միավորների թվաքանակը (հաստիքացուցակը) և պաշտոնային դրույքաչափերը:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի.

- 28.12.2015թ. թիվ 417 հրամանով հաստատվել է 2016թ. հունվարի 1-ից գործող ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատակիցների ցուցակը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն ի դեմս ՀՀ ԱՎԾ նախագահի և աշխատակազմի ղեկավարի, կնքել է աշխատանքային պայմանագրեր և համաձայնագրեր ՀՀ ԱՎԾ աշխատակազմում, Գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչությունում, «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում նշանակված աշխատակիցների հետ:

Կառավարական թիվ 3 շենքի էլեկտրոնային անցագրային համակարգի անհատական մագնիսական քարտերի ծրագրավորման և տպագրության նպատակով կազմվել է անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատողներին տրամադրվել են ծառայողական վկայականներ՝ համաձայն օրինակելի ձևի:

Ուսումնաարտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադե-

միայի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Երևանի հայբուսակ համալսարանի և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 84 ուսանողների համար:

Բարեխիղճ աշխատանքի համար շնորհակալագրով խրախուսվել են ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով՝ 4 աշխատակից, իսկ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով՝ 9 աշխատակից:

«Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային գորավարժությանն ակտիվ մասնակցության համար շնորհակալագրով խրախուսվել են ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով՝ 5 աշխատակից, իսկ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով՝ 3 աշխատակից: